

ԱՐԺ. ԳՐԻԳՈՐ ՎԼԲԴԱՊԵՏ

ՓՈԽԱՆՈՐԴ ԳՆԱԶԱԿՆՑ.

ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԱՐԿԻՎԱՆԻ ԱՆՏԻԿՈՆ.

Ամեն մէկ վնասակար պատահար ունի իրեն հետագայ լաւութիւնը, որով մարդիք կ'պարտաւորին ճանաչել Աստուծոյ անշաղի խնամոց զթուփիւնն՝ և անոր տաճարի ծառայողների արժանաւոր յարգը՝ ըստ բանին՝ Որ զձեզ ընգունի՝ զիս ընգունի. իրաւի այս անհերքելի ճշմարտութիւնը ամենայն քրիստոնեայ ազգաց սրտի մէջ պահուած է և պիտի պահուի ց յաւիտեան. ես որ ճշմարտութեան սիրահար եմ՝ ծանր կ'համարիմ ինձ ճրագն թողուլ գրուանի տակ. այլ կ'փութամ՝ առանց վարանելու ի լոյս հանել ի մխիթարութիւն ջերմեռանդ սրտից մերազնեայ ժողովրդականաց և ի գիտութիւն ամենայն արդարասէր անձանց:

Անցնալ Սեպտեմբրի 25-ն քստմեցուցիչ իրողութիւն մը պատահեցաւ Գանձակայ մէջ. այս ահաւելի գործողութեան անունն էր խօրեայ՝ որ իր սոսկալի հնձողութեամբ տեւեց ց 10-ն Նոյեմբրի, որոյ առաջն առնելոյ համար քաղաքական իշխանութիւնը զանազան միջոցներով կարգադրութիւններ ըրաւ իր կողմէն և հրամայեց՝ որ պանդուխտ հիւանդների համար առանձին սենեակներ պատրաստուի. այս տեղ մեր ազգասէր Յաջորդ Գրիգոր վարդապետն Տ. Ստեփաննոսեան յօժարեցաւ տալ նրանց իր սենեկի ներքե զանազան և բաւականին մաքուր սենեակ մը. անկեղծութեամբ և առանց ահառութեան հրապարակաւ կ'յայտնեմ իմ սիրելի ազգայնոց, այս կէտին մէջ հայրենասիրութեան զգացուն գեղեցիկ և վսեմ հոգի մը նշմարեցի՝ այդ վարդապետի վրան՝ որ ի ներկայութեան բազմաց կրկնեց և երեքնեց՝ եթէ ուրիշ սենեակներ հարկաւորի՝ ես պատրաստ եմ իմ Յաջորդարանս նուիրելու իմ սիրելի պանդուխտ ազգայնոց. իրաւի ամենայն զգացուն և քնքուշ սրբտերու համար անմոռանալի կ'պահուին մեր Յաջորդի հայրենասիրական խօսքերը. այս ասածներս՝ ոչ թէ բերանացի էր, ոչ ոչ՝ սիրելի ընթերցող՝ արդեամբ և գործով տեսնուեցաւ խնամաշատ հօր վերայ. որոյ համար ահա հետեւեալ կ'լսուիմ.

մեր հոգեւոր Հայրը տեղւոյս Թաղապետ (այսինքն պրիստաւ) Բեկլար բէկի հետ կարգադրելուց յետոյ այն տարաբաղոտ օտարական հիւանդաց վիճակը, սկսաւ կրօնական քաջալերիչ խօսքերով յորդորել ու մխիթարել իր սիրելի ժողովրդականաց տրտմեալ սրտերը, և իսկոյն հրամայեց երեկոյեան և առաւօտեան ժամերգութենէն վերջը ծունկի չըբաժ, ըստ ցուցակին տուեցելոյ յինքնէ. Տէր «ԶԵՐԷ» ասն հանդերձ մաղթողական շարականներով. և յետ քանի մի աւուր օրինաւոր բանախօսութեամբ ասեց՝ այս տկարութեան սպիղանին ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ աղօթք, որորմութիւն և սուրբ պատարագ յիշեցնելով «Զմեղս քո որորմութեամբ քաւեսցես. և թէ Աղօթք յոյժ զօրաւոր են յօգնականութիւն.», և հրամայեց հսկում կատարին՝ պատուիրելով արք և կանայք՝ ծիրք և տղայք ներկայ լինին, որպէս զի հոգեւորականաց և աշխարհականաց ձայներն միաւորուած իրարու հետ ինչպէս խունկ երեկոյեան պատարադի հաճոյասցին երկնաւոր և զթաժ Հօրը, որոյ հաշտութեամբն մեզ հետ՝ մահտարաժամ հիւանդութիւնն անհետանայ այս քաղաքէս: Արդարեւ լսելի եղան այն սրտառուչ մաղթանքներն վերին նախախնամութեան. յ30 Հօկտ. հսկում կատարելէն յետոյ Գեր. Յաջորդը դարձաւ գէպ ի այն խումն կանգնեալ բարեպաշտ ժողովուրդն սուրբ Աւետարանի այս բնաբանին՝ Տեսցեն զգործըս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է. չեմ զլանայ ասելու սրտաշարժ և ազգու իմաստներով բացատրեց Աւետարանի միտքը՝ որք բաւական մխիթարութիւն եղան ժողովրդոց սրտից. և պատուիրեց որ՝ ինչպէս յառաջ ասած էր՝ պատրաստի մատաղներն զոհալին հասարակաց գերեզմանատանն, որովհետեւ եկեղեցական հանգիսիս՝ վաղը այս տեղ թափօր կատարելէն վերջը, այն տեղ պէտք է գնանք. իսկ վաղիւ՝ որ Նիւրակէ էր, Մայր եկեղեցումն սուրբ պատարագէն զկնի թափօրի հանգիսի հետ կատարեց և Խաչուէլայի ջրոյ օրհնութեան կարգը, և այն ջուրը իր ձեռքով բոլորին խնցուց. և յետ այնորիկ ժամը 11 գնաց Սուրբ Լուսաւորիչ եկեղեցին. ուր սկսուեցաւ սուրբ Պատարագն. և պատարագէն յետոյ՝ որին զրեթէ ներկայ էին բոլոր ժողովրդա-

կանք և քանի մի Ռուս և Տաճիկ, այս տեղ ևս սկսաւ Գեր. Հայրը մարգարէի խրատուիչ խօսքերով մխիթարել իւր տխրասիրտ Հօտը՝ Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտուց եղիցի ուրախութիւն. յիշեց 'նինուէի անցքը, Ասորեստանի պատերազմը և նոյն Մարգարէի բանը՝ թէ Ես Հովիւս մեղայ. և յետոյ քահանայք եկեղեցական զգեստներովն՝ դպիրք (նորին) հանդիսիւ՝ Խաչիւ խաչվառաւ և Մեռօնիւ դուրս ելան՝ եկեղեցուց և ընթացքները ուղղեցին դէպի գերեզմանատունն, ուր պատրաստուած էր Խաչուպի ջուրն և մատաղն աղքատաց համար. երբ հասան նշանակեալ տեղն՝ որդեսէր Հայրը չ'նայելով տեղւոյն փոշոտ լինելը, իսկոյն ծունկի չորբաւ մեկ ձեռքն ունելով սուրբ Թագէի Առաքելոյ մասունքը, իսկ միւս ձեռքը իւր վեղարը՝ զխտրաց սկսեց Սուրբ Խաչի Շարականը շատ տխրազին ձեռով. յետ այնորիկ բոլորը սկսեցին երգել և Տէր "Դուք"՝ ասել. որոյ աւարտմանէն յետոյ թափօր սկսեցին և խաչուաշի կարգ կատարեցին. այս տեղ ևս աշխատաւոր Հայրը չ'նայելով տաքութեան և ժողովրդոց խառնիխուռն ընթացման՝ իրեն ձեռքով բոլորին խրճուցուց նոյն ջուրը. չիմ՝ դանդաղի տեղւոյս բարեպաշտ ժողովրդոց ի սրտէ ջերմեռանդութիւնը կրօնական մասի մէջ հրապարակ հանել. Գեր. Յաջորդի խօսքերը իրեւ Աստուծոյ պատգամ՝ կ'համարէին, կանայք և մարդիք բոկ ոտիւք գնալով արտասուքը պետօրէն կ'թափէին. բաւականին ժողոված դրամ՝ բաժանեցին աղքատաց. Իսկ ամսոյս 4-ն տեղւոյս դպրոցի Հոգաբարձութիւնը տնօրինեց՝ որ վարժապետներից, աշակերտներից և խրեն անդամներից կամաւոր փող ժողովի և կիրակի օրն մատաղ զոհօրի դպրոցի առաջ՝ որ ի սրահի Մայր եկեղեցւոյ, Հոգաբարձութեան նախագահը Գեր. Հայրը խօսեց բոլոր վարժապետներին և աշակերտներին համառօտ եղանակաւ մը հաղորդութեան սուրբ խորհրդոյ վրոյ և յայտնեց՝ որ բոլորն ալ պէտք է հաղորդուին և ինքն պատարապիչ լինելու է և իր հոգեւոր զաւակները հաղորդելու, որպէս զի նոցա ձայնը ըստ մանկանց Բեթղէհէմի հաճելի լինի Վերին զմառատ ողորմութեան. ևս պատուիրեց վարժապետաց՝ որ սորվեցնեն թէ ինչպէս կարգով և ինչպէս ջերմեռան-

դութեամբ պէտք է ներկայանան այն սոսկալի խորհրդոյն և ինչ Սաղմոս ասն իրենց բերանը բաց արաց ժամանակը. ամենայն կերպ կարգի դրնելով՝ շարաթ երեկոյան երկու զաս կանգնեցան աշակերտք եկեղեցում՝ ժողովրդոց մէջ, որոց համեստ կանգնելն և անմուռն ձայնիւ աղօթելն՝ իրենց ծնողաց կերպարանքի վերայ մի նոյն առաքինութեան նշմարանք կ'տեսնուէր. նոյն աւուր ժամերգութենէն վերջը դարձաւ նորէն մեր հոգեւոր Հայրը ազգու կերպով բացատրեց Սաղմոսի այն տունը, Իբրանոց մանկանց տղայոց հաստատեցեր զօրհնութիւն. իսկ կիրակի օրն ժամը 11-ն հրնչեցան զանգակք Մայր եկեղեցումն և սկսաւ անմահ պատարագ. երբ Երկկուղիւ և հաւատովն ասուեցաւ՝ աշակերտք պարկեշտ ձեռով զոյգ զոյգ ներկայացան սուրբ խորհրդոյն և հաղորդեցան. յետ վախճանին այն ինչ Որ օրհնեա զայնսիկ սկսեց սրբ. Պատարագիւն՝ եկեղեցական դասքը ըստ անցիկոյն պատրաստուած գնացին դպրոցի առաջ, ուր աշակերտք չորս զաս բռնած հարաւային կողմը ու զրասեղաններին վերայ դասաւորուած մատաղն առանձին կտորներով, այն տեղ ծունկի եկան թէ հոգեւորականք և թէ աշխարհականք, երբ բարեպաշտ ժողովուրդը տեսաւ որ Սրբ. պատարագիւն ծունկի՝ որոյ ձեռքին Փրկչական սուրբ Խաչը ու դպրոցի աշակերտները իրեն ձախ կողմը՝ յիշեցուց ջերմեռանդ ժողովրդականաց սուրբ եկեղեցւոյ ախոյեան քաջամարտիկ Վահագնաց այն կրօնական նահատակութեան սուրբ պատերազմը՝ որ ընդդէմ՝ ռեբրիմ՝ թշնամեաց Խաչին Քրիստոսի, այս տեղ ևս բոլոր հանդիսականք ուղիսօրէն արտասուքը կ'հոսեցնէին իրենց աչքերէն. և այս բոլոր հանդէսը կատարելէն վերջը ըսկսեց Սրբ. Պատարագիւն օրհնել մատաղն հրաւիրելով բոլոր ժողովրդականք՝ որ ճաշակեն. իսկ աշակերտք պատկառ կերպով ամենէն ետքը ստանալով մի մի պատառ՝ գնացին իրենց տունն և բոլոր հանդիսականք ուրախութեամբ դարձան իրենց բնակարանները. Ահա այս Աստուածահաճոյ ջերմեռանդութեամբ այն օրէն բոլորովմբ անհետացան այդ ահօնիկ հիւանդութիւնն Գանձակայ Հայ ժողովրդականաց մէջէն, և այսպիսի շքեղազարդ եկեղեցական հանդէս առաջին անգամն է՝

